

Թիւ 1805  
Յունուար 5, 1961

Արժանաշնորհ  
Տ. Վրթանէս Աւագ ԹՀՆՅ. փափագեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Ս. Միլվոթի.

Սիրելի Տէր Հայր.

Առաջնորդ Արքեպիսկոպոս Հօր յանձնարարութեամբ այսու կը յայտնենք.  
Թէ ստացուած է Ս. Միլվոթիի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Միակն խորհուրդի տարեկան տեղեկագիրը եւ ատենադպիր Պրն. Հէրրի Նահպետեանի ու Թեմական պատգամաւոր Պրն. Կարապետ Պաղտասարեանի ստորագրութիւնը կրող նամակը ի մասին ծխական վասնակի ընտրութեան:

Առաջնորդ Արքեպիսկոպոս Հայրը կը փափաքի Ձեր ուշադրութեան յանձնել հետեւեալ կէտերը.-

1. Տեղեկագիրին մէջ չէ տրուած Միակն խորհուրդի տարեկան մուտքն ելժը:
2. Երկու Թեմական Պատգամաւորներ ընտրուած է Միակն ժողովին կողմէ, մինչդեռ կ'ըսուի տեղ մը թէ Եկեղեցւոյ տրատու անդամներուն թիւը 60 է: /1960ի տեղեկագիրին մէջ ըսուած էր 115 անդամ ունի Ձեր Եկեղեցին, իսկ Յունիս 13 Թուակիր նամակով վախճանեալ Տ. Սուքիաս Ս. Վրդ. Գալնայեան կը հաղորդէր թէ 200 տրատու անդամ կայ/: Եթէ փակագիրին մէջ տրուած թիւերը ճիշդ չեն եւ իսկապէս Ձեր ծուխը ունի միայն 60 անդամ, այդ պարագային, ըստ Թեմական Կանոնադրութեան չէ՞ր կրնար երկու Թեմական պատգամաւորներ ընտրել, քանի որ հարիւր անդամ ունեցող համայնք մը կու տայ մէկ պատգամաւոր, 101 կամ մինչեւ 200 անդամ ունեցող ծուխը կու տայ երկու պատգամաւոր:
3. Տեղեկագիրին մէջ ըսուած է թէ 55 հոգի մասնակցած են ժողովին, բայց նամակին մէջ չէ գրուած թէ ընտրեալներէն իւրաքանչիւրը քանի քուէ ստացած է:
4. Նամակը Ձեր ստորագրութիւնը չի կրեր, ինչ որ անհրաժեշտ է:

Հանձնէք վերոյիշեալ թերիւնները լրացնել պատուարժան Միակն խորհուրդի եւ Թեմական պատգամաւոր Պրն. Կարապետ Պաղտասարեանի հետ խորհրդակցաբար, որպէս զի Թեմական խորհուրդը վաւերացնէ Ձեր ընտրութիւնները:

Առաջնորդ Արքեպիսկոպոս Հօր հրահանգն է որ Ձեր ծուխը վճարէ Առաջնորդարանի հանդէպ ունեցած հետեւեալ պարտքերը.- 480 տոլար Թեմական տուրք, 30 տոլար Առաջնորդարանի օրացոյցերու համար, 16.50 "Եջմիածին" ամսագրի, 18 տոլար Վեհափառ Հայրապետի գիրքերուն եւ 1.50 տոլար Եջմիածնի գրպանի օրացոյցերու համար:

Աստ Թեմական Կանոնադրութեան, Առաջնորդարանի ենթակայ ծուխերու սահմանուած տուրքերն ու զօթաները վճարելի են տնտեսական տարւոյ ընթացքին: Ատահարար, դուք եւ պատուարժան Մխական Խորհուրդդ այս պարագան նկատի ունենալով՝ նախանձախնդրութեամբ պիտի կատարէք Ձեր պարտականութիւնները հանդէպ Առաջնորդարանի որուն տնտեսական պէտքերը կը հոգացուին Թեմական Պատգամաւորական Ժողովի կողմէ սահմանուած պիւտճէին համաձայն:

Մաղթելով Ձեզի եւ պատուարժան Մխական Խորհուրդիդ բոլոր անդամներուն կարողութիւն եւ յաջողութիւն:

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան  
Պիւանապետ